Արձանագրություն 3

«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար « ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ -18/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով Վառելիքի գնում կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 27.09.2018թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ս.Խաչատրյան – «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բուժ.գծով փոխտնօրեն

Անդամներ

Ա.Է.Սիմոնյան- «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխ. հաշվապահ

Ա.Գ.Սիմոնյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դեղատան վարիչ

Հ.Գաբրիելյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ, գանձապահ

Ա.Հակոբյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի վարորդ, մեխանիկ

Քարտուղար-գնումների համակարգող

Լ.Բազիկյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ, գնումների համակարգող

1. <u>ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին</u>

1. Ընդունել ի գիտություն, որ

1.1 Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին պահանջի՝ 18.09.2018թ.-ին հարցում է ներկայացվել ՀՀ կառավարության պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 20.09.2018թ.-ին ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ն չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետբյուջեի նկատմամբ:

1.2 «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ -18/1» ծածկագրով էլեկտրոնայի աճուրդով գնման ընթացակարգի առաջին տեղ գրված մասնակից ճանաչված «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի կողմից համակարգի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը.

-Հանձնաժողովի քարտուղարը ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

-Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. <u>Էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին</u>

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-18/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ՖԼԵԵՇ» ՍՊԸ	բավարար

-Մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. <u>Հաստատել «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ -18/1» գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին</u>

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ -18/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ՖԼԵԵՇ» ՍՊԸ-ին՝ 1-ին չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. <u>Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին</u>

4.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների, այն է՝ անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր, համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում <<ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-18/1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի շրջանակներում:

4.2 Գնման ընթացակարգի արդյունքների հաստատման նիստից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում <<Վեդու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրենին տրամադրել մրցույթի արդյունքների հաստատման նիստի արձանագրության պատճենը՝ օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքելու նպատակով: Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը պետք է կնքվի հրավերով սահմանված կարգով. Այն է՝ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը ստորագրելու և պատվիրատուին պայմանագրի ապահովումը ներկայացնելու պայմանով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

Հանձնաժողովի՝ էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման վերաբերյալ հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելու օրը ժամը 16:00-ին, «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքում, հասցե՝ ք.Վեդի, Գայի 2:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Է.Սիմոնյան

_____ Ա. Գ.Սիմոնյան

_____ Հ.Գաբրիելյան

_____ Ա.Հակոբյան

Քարտուղար՝ _____ Լ.Բազիկյան